Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. հունվարի 27-ի թիվ 3-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս 3

2. Ամփոփագիր 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ 4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ 5

5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ. 13

1. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. հոկտեմբերի 13-ի թիվ 248-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննության առարկայի չափանիշները	ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենք, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2022թ. հունվարի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ամփոփագիր

Առկա է անհամապատասխանություն կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարման՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության հետ առնչվող պահանջներում:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների ցանկ

Հ/Հ	Անհամապատասխանության տեսակ	Անհամապատասխանությունը
1.	Գնումների գործընթաց	ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում՝ Գնահատող հանձնաժողովի 15.09.21թ. կայացած նիստի արձանագրությունը չի հրապարակվել տեղեկագրում:
2.	Գնումների գործընթաց	ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում՝ Գնահատող հանձնաժողովի 15.09.21թ. կայացած նիստի արձանագրության համաձայն՝ հանձնաժողովի աշխատանքներին որպես անդամ մասնակցել և արձանագրությունը ստորագրել է Գ. Բ.-ն, սակայն նրա կողմից տրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը չի հրապարակվել տեղեկագրում:

4.Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ՄՍԾ) ՀՀ 2021թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 406,937,867.68 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 447,920,700.81 հազ. դրամ: Ինն ամիսների պլանը կազմել է 307,816,521.52 հազ. դրամ, ինն ամիսների ճշտված պլանը՝ 353,765,035.65 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը 349,590,145.19 հազ. դրամ է, փաստացի ծախսը՝ 349,991,908.62 հազ. դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստը կազմել է 310,690,470.27 հազ. դրամ, որը հաշվետու տարվա ինն ամիսների նկատմամբ 12.5%-ի չափով պակաս է եղել:

Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ

Աղյուսակ 1

	Ծրագիր/միջոցառում	Գումար, հազ.դրամ
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	18,986,288.06
1068-11001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում	11,321.24
1068-12001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	6,032,223.40
1068-12002	Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	12,942,743.42
1102	Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում	206,033,955.59
1102-11001	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում	28,426.94
1102-11002	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում	842,993.04
1102-11003	Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն	770.00
1102-12001	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	24,145,557.21
1102-12002	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	427,994.53
1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	178,421,888.07
1102-12004	ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	2,166,325.80

1205	Սոցիալական ապահովություն՝ այդ թվում	76,279,401.17
1205-12001	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	19,391,746.77
1205-12002	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	3,901,705.88
1205-12004	Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին	214,400.00
1205-12005	Աջակցություն զոհվածների ընտանիքներին	3,259,500.00
1205-12007	ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն	1,014.86
1205-12010	Ռազմական դրությամբ պայմանավորված միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին	27,411,289.03
1205-12011	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին	6,983,100.00
1205-12012	ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին սոցիալական աջակցություն	7,991.03
1205-12014	Ռազմական դրությամբ պայմանավորված դրամական աջակցություն վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին	48,800.00
1205-12015	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Արցախի բնակչությանը	7,614,338.60
1205-12016	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն Արցախի Հանրապետությունում հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին	1,383,750.00
1205-12021	Ռազմական դրությամբ պայմանավորված՝Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում	237,210.00
1205-12022	Ռազմական դրությամբ պայմանավորված՝Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում	2,089,725.00
1205-12023	2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմ. գործող. հետեւանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում	3,692,500.00
1205-12025	Ռազմ. դրությամբ պայման.՝ Արցախի Հանր. վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղ-ին ժամանակ. հյուրընկալողների ծախս. փոխհատուցման եռամսյա սոց. աջակցության	42,330.00

	տրամադրում իրավ.անձանց եւ անհատ ձեռնարկատերերին	

Ժողովրդագրական վիճակի բարելավում ծրագրի Երեխայի ծննդյան միանվագ նպաստ միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 13,415,672 հազ. դրամ տրամադրվեր 29,330 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 12,942,743.42 հազ. դրամ 24,788 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 472,928.58 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է հաստատված/ճշտված և փաստացի ծնված երեխաների (համապատասխան կարգաթվերով) թվաքանակի և գումարի տարբերությունով, իսկ 4,542-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի նորածինների կարգաթվերով ստացող նպաստառուների թվաքանակով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 33,543 շահառուի տրամադրվեր 24,371,779.16 հազ. դրամ գումար: Ինն ամսվա ընթացքում փաստացի տրամադրվել է 24,145,557.21 հազ. դրամ գումար 31,541 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 226,221.95 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է նախատեսված (իրավունք ձեռք բերած) և փաստացի ստացող կենսաթոշակառուների թվաքանակի և ֆինանսավորված գումարի տարբերությունով, իսկ 2,002-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի կենսաթոշակառուների թվաքանակի տարբերությունով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 459,786 շահառուի՝ 179,004,920.4 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում փաստացի 437,266 շահառուի տրամադրվել է 178,421,888.07 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 583,032.33 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների

պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների հանրապետությունից բացակայելու հանգամանքով, իսկ 20,848-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է հաստատված (իրավունք ձեռք բերած) և փաստացի կենսաթոշակառուների թվաքանակի տարբերությունով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Աջակցություն զոհվածների ընտանիքներին միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 3,293,500 հազ. դրամ: Ինն ամիսների ընթացքում փաստացի 2,813 շահառուի տրամադրվել է 3,259,500 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 34,000 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է միջոցառման գծով ուժային կառույցներից ստացված փաստացի պահանջով, իսկ 2,813 շահառուների ճշտված պլանում նախատեսված չլինելու հանգամանքը պայմանավորված է պլանային ցուցանիշ սահմանված չլինելով: Փաստացի ցուցանիշը շահառուների համար ուժային կառույցներից ստացված ֆինանսավորման ենթակա թվաքանակն է:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 27,918,690 հազ. դրամ տրամադրվեր 424,873 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 27,411,289.03 հազ. դրամ 407,537 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 507,400.97 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով, իսկ 17,336-ով շահառուների նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ ինն

ամիսների ճշտված պլանի պետք է 6,983,125 հազ. դրամ տրամադրվեր 23,397 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 6,983,100 հազ. դրամ 23,272 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 25 հազ. դրամ պակաս տրամադրելը և 125-ով շահառուների նվազեցումը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Արցախի բնակչությանը միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք 7,614,338.6 հազ. դրամ տրամադրվեր: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 7,614,338.6 հազ. դրամ: Ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստացի վճարվածի միջև տարբերություն առկա չէ:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն Արցախի Հանրապետությունում հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք 1,383,750 հազ. դրամ տրամադրվեր 5,535 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 1,383,750 հազ. դրամ 5,535 շահառուի: Ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստացի վճարվածի միջև տարբերություն առկա չէ:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք 237,500 հազ. դրամ տրամադրվեր 1,889 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 237,210 հազ. դրամ 7,827 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 290 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների

պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով, իսկ 5,938-ով շահառուների ավելացումը պայմանավորված է պլանային ցուցանիշի միջին լինելով՝ փաստացի ցուցանիշը ներկայացված է յուրաքանչյուր ամսվա փաստացի ստացողների հանրագումարային թվով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք 2,090,000 հազ. դրամ տրամադրվեր 4,634 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 2,089,725 հազ. դրամ 65,632 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 275 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով, իսկ 61,198-ով շահառուների ավելացումը պայմանավորված է պլանային ցուցանիշի միջին լինելով՝ փաստացի ցուցանիշը ներկայացված է յուրաքանչյուր ամսվա փաստացի ստացողների հանրագումարային թվով:

Սոցիալական ապահովություն ծրագրի 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 3,710,000 հազ. դրամ 7,420 շահառուի: Ինն ամիսների ընթացքում փաստացի տրամադրվել է 3,692,500 հազ. դրամ 7,385 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 17,500 հազ. դրամ պակաս տրամադրելը և շահառուների քանակի 35-ով պակասեցումը ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ

Միասնական սոցիալական ծառայության 2021 թվականի տարեսկզբին հաստատված գնումների պլանով նախատեսվել է 1,880,465.0 հազ. դրամ գումար: Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2021թ. գնումների պլանից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 107 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 136 պայմանագիր ընդհանուր 1,876,134.6 հազ. դրամ պայմանագրային արժեքով, որից գազի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի, ախտահանման և մակաբույծների ոչնչացման, հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայությունների համար կնքվել է թվով 47 պայմանագիր ընդհանուր 1,650,370.1 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Նշված պայմանագրերի շրջանակներում ներկայացված կատարողականներով մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ վճարվել է ընդհանուր 1,253,938.7 հազ. դրամ, որից գազի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի, ախտահանման և մակաբույծների ոչնչացման, հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայությունների համար՝ 1,171,371.3 հազ. դրամ:

1205-12005 Աջակցություն զոհվածների ընտանիքներին (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 3,259,500.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12010 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 27,411,289.03 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12011 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ միանվագ դրամական աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 6,983,100.0 հազ.դրամ

փաստացի ծախս), 1205-12015 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Արցախի բնակչությանը (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 7,614,338.60 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12016 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին միանվագ դրամական աջակցություն (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 1,383,750.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12021 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 237,210.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12022 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 2,089,725.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12023 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի ինն ամիսների ընթացքում 3,692,500.0 հազ.դրամ փաստացի ծախս) ծրագրերի շրջանակներում իրականացված միջոցառումների մասով անդրադարձ կկատարվի հետագա հաշվեքննությունների ընթացքում:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարումը՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուսումնասիրությունից պարզվեց, որ.

1. ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում.

1.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Գնահատող հանձնաժողովի 13.09.21թ. կայացած և 14.09.21թ. հրապարակված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով, ինչպես նաև հայտերի գնահատման նպատակով նիստ հրավիրել 15.09.21թ., որը չի հրապարակվել տեղեկագրում:

1.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: Գնահատող հանձնաժողովի 13.09.21թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 11-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվե է 15.09.21թ., ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

1.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված: Տեղեկագրում 13.09.21թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշված է, որ ընթացակարգի բոլոր մասնակիցների

կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները հաստատվել են գնահատող հանձնաժողովի 15.09.21թ. թիվ 2 որոշմամբ, ուստի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը չէր կարող հրապարակվել տեղեկագրում նախքան գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի վերջնական գնահատումը և ընտրված մասնակցի վերաբերյալ որոշումը:

1.4 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 13.09.21թ., իսկ կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ 10.10.21թ.: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, ուստի կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ

տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ չի հրապարակվել տեղեկագրում:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

1.1 Հայտերի գնահատման նիստի արձանագրության սկանավորված տարբերակները առկա են, դրանց հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա: Հարկ է նշել, որ հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը առկա է պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունում, որը հրապարակված է տեղեկագրում:

1.2 Գնման ընթացակարգի 11-րդ չափաբաժինը չկայացած հայտարարվելու վերաբերյալ հայտարարությունը ստեղծվում և տեղեկագրում հրապարակվում է eauction.armeps.am համակարգի կողմից, ինքնաշխատ եղանակով: Համակարգի կողմից չկայացած չափաբաժինների վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու համար eauction.armeps.am համակարգում հնարավորությունը ստեղծվում է բոլոր հայտերի գնահատման օրը՝ 15.09.2021 (հայտերի շտկված փաստաթղթերի գնահատման համար հրավիրված նիստի օրը):

1.3 Պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունը ստեղծվում և հրապարակվում է eauction.armeps.am համակարգի կողմից հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստից հետո՝ 15.09.2021 (հայտերի շտկված փաստաթղթերի գնահատման համար հրավիրված նիստի օրը): Հայտարարության հրապարակման և հայտերի գնահատման արդյունքների նիստի օրվա ամսաթվերի տարբերությունը eauction.armeps.am համակարգի աշխատանքի արդյունք է: Անգործության ժամկետի հաշվարկը կատարվում է eauction.armeps.am համակարգի կողմից, այդ ժամկետի ավարտից հետո է միայն հնարավոր շնորհել պայմանագիր:

1.4 Իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունն ուշացումով հրապարակվելը տեխնիկական վրիպակ է, հավանաբար admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք է, ինչը չի հանգեցրել

մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլինի, որպեսզի գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազոր մարմինը քայլեր ձեռնարկի eauction.armeps.am համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացներում համապատասխան շտկումներ իրականացնելու ուղղությամբ և դրանք համապատասխանեցնելու գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերով սահմանված պահանջներին:

2. ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-21/3 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: Գնահատող հանձնաժողովի 18.08.21թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվե է 20.08.21թ., ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված: Տեղեկագրում 18.08.21թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշված է, որ ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները հաստատվել են գնահատող հանձնաժողովի 20.08.21թ. թիվ 2 որոշմամբ, ուստի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը չէր կարող հրապարակվել տեղեկագրում նախքան գնահատող հանձնաժողովի կեղմից հայտերի վերջնական գնահատումը և ընտրված մասնակիցների վերաբերյալ որոշումը:

2.3 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 18.08.21թ., իսկ կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ 02.09.21թ.: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական

անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, ուստի կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ չի հրապարակվել տեղեկագրում:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

2.1 Գնման ընթացակարգի մի շարք չափաբաժինները չկայացած հայտարարվելու վերաբերյալ հայտարարությունը ստեղծվում և հրապարակվում է eauction.armeps.am համակարգի կողմից, ինքնաշխատ եղանակով՝ 20.08.2021 հաձնաժողովի նիստում բոլոր հայտերը գնահատվելուց հետո: Համակարգի կողմից չկայացած չափաբաժինների վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակելու համար eauction.armeps.am համակարգում հնարավորությունը ստեղծվում է հայտերի գնահատման օրը՝ 20.08.2021:

2.2 Պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունը ձևավորվում է eauction.armeps.am համակարգի կողմից՝ ինքնաշխատ եղանակով՝ 20.08.2021 հաձնաժողովի նիստում բոլոր հայտերը գնահատվելուց հետո, հետևաբար տեղեկագրում 18.08.2021 ամսաթիվը համակարգի կողմից դրված ամսաթիվն է: Անգործության ժամկետի հաշվարկը eauction.armeps.am համակարգում ավարտվելուց հետո է հնարավոր շնորհել պայմանագիր:

2.3 Իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը ուշացումով հրապարակվելը տեխնիկական վրիպակ է, հավանաբար admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք է, ինչը չի հանգեցրել

մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլինի, որպեսզի գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազոր մարմինը քայլեր ձեռնարկի eauction.armeps.am համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացներում համապատասխան շտկումներ իրականացնելու ուղղությամբ և դրանք համապատասխանեցնելու գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերով սահմանված պահանջներին:

3. ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: Գնահատող հանձնաժողովի 13.09.21թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը

տեղեկագրում հրապարակվե է 15.09.21թ., ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված: Տեղեկագրում 13.09.21թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշված է, որ ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները հաստատվել են գնահատող հանձնաժողովի 15.09.21թ. թիվ 2 որոշմամբ, ուստի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը չէր կարող հրապարակվել տեղեկագրում նախքան գնահատող հանձնաժողովի կեղմից հայտերի վերջնական գնահատումը և ընտրված մասնակիցների վերաբերյալ որոշումը:

3.3 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 13.09.21թ., իսկ կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ 10.10.21թ.: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների

վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, ուստի կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ չի հրապարակվել տեղեկագրում:

3.4 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 20-րդ կետերի հիման վրա կատարվող գնումների: Գնահատող հանձնաժողովի այն անդամները, ովքեր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը: Գնահատող հանձնաժողովի 13.09.21թ. կայացած և 14.09.21թ. հրապարակված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ նիստից բացակայել է Հ. Օ.-ն ով

նաև չի ստորագրել շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը: Գնահատող հանձնաժողովի 15.09.21թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովի աշխատանքներին որպես անդամ մասնակցել և արձանագրությունը ստորագրել է Գ. Բ.-ն, սակայն նրա կողմից տրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը չի հրապարակվել տեղեկագրում:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

3.1 Գնման ընթացակարգի մի շարք չափաբաժինները չկայացած հայտարարվելու վերաբերյալ հայտարարությունը ստեղծվում և հրապարակվում է eauction.armeps.am համակարգի կողմից, ինքնաշխատ եղանակով՝ 15.09.2021թ. հաձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստում բոլոր հայտերը գնահատվելուց հետո: Համակարգի կողմից չկայացած չափաբաժինների վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակելու համար eauction.armeps.am համակարգում հնարավորությունը ստեղծվում է բոլոր հայտերի գնահատման օրը՝ 15.09.2021 (հայտերի շտկված փաստաթղթերի գնահատման համար հրավիրված նիստի օրը):

3.2 Պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունը ստեղծվում և հրապարակվում է eauction.armeps.am համակարգի կողմից հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստից հետո՝ 15.09.2021 (հայտերի շտկված փաստաթղթերի գնահատման համար հրավիրված նիստի օրը): Հայտարարության հրապարակման և հայտերի գնահատման արդյունքների նիստի օրվա ամսաթվերի տարբերությունը eauction.armeps.am համակարգի աշխատանքի արդյունք է: Անգործության ժամկետի հաշվարկը կատարվում է eauction.armeps.am համակարգի կողմից, այդ ժամկետի ավարտից հետո է միայն հնարավոր շնորհել պայմանագիր:

3.3 Իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը ուշացումով հրապարակվելը տեխնիկական վրիպակ է, հավանաբար admin.gnumner,

gnumner.am համակարգերի խափանման հետևանք է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

3.4 Գնահատող հանձնաժողովի անդամ Հ. Օ. Ծառայության գլխավոր քարտուղարի 06.09.2021 թիվ 1556-Ա հրամանով գտնվել է չվճարվող արձակուրդում, հետևապես 13.09.2021 բացակայել է հայտերի բացման նիստին: Ծառայության գլխավոր քարտուղարի 15.09.2021 թիվ 122 հրամանով կատարվել է գնահատող հանձնաժողովի անդամի փոփոխություն՝ Հ. Օ.-ին փոխարինել է հանձնաժողովի անդամ Գ. Բ.-ն: Գ. Բ.-ի հայտարարությունը շահերի բախման բացակայության մասին առկա է և դրա հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա, շտկվող է:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արձանագրությամբ նշված անհապատասխանությունները տեխնիկական են, այդ թվում նաև armeps.am, admin.gnumner.am, eauction.armeps.am և gnumner.am համակարգերի աշխատանքով պայմանավորված: Միաժամանակ armeps.am, admin.gnumner.am, eauction.armeps.am և gnumner.am համակարգերի պատշաճ գործողության և հետագայում տեխնիկական խնդիրները բացառելու նպատակով ակնկալվում է նաև Ձեր գործուն միջամտությունը:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլինի, որպեսզի գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազոր մարմինը քայլեր ձեռնարկի eauction.armeps.am համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացներում համապատասխան շտկումներ իրականացնելու ուղղությամբ և դրանք համապատասխանեցնելու գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերով սահմանված պահանջներին: